ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.11.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/237

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 02.11.2020թ. թիվ 26/26-1/16460-2020 գրությամբ Ա/Ձ Վարդուհի Բագրատյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 19.10.2020թ. թիվ 747 և 28.10.2020թ. թիվ 772 գրությունների հիման վրա, 02.11.2020թ. թիվ 26/26-1/16460-2020 գրությամբ նախաձեռնել է Ա/Ձ Վարդուհի Բագրատյանին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Ա/Ձ Վարդուհի Բագրատյանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ա/Ձ Վարդուհի Բագրատյանի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ա/Ձ Վարդուհի Բագրատյանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/237 ընթացակարգի շրջանակներում 09.11.2020թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 19.10.2020թ. թիվ 747 գրությամբ հայտնել է, որ ներկայացվում է «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/12-1» պայմանագրի լուծման հիմքը, որը հրապարակված է www.procurement.am կայքում 18.10.2020թ.:

Այնուհետև՝ 28.10.2020թ. թիվ 772 գրությամբ հայտնել է, որ ներակայացվում է «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/12-1» պայմանագիրը, Ա/Ձ Վարդուհի Բագրատյանի կողմից մատակարարված ապրանքների հանձնման-ընդունման արձանագրությունը և իր կողմից ուղարկված երկու գրությունները:

Միևնույն ժամանակ, Պատվիրատուն նշել է, որ վերը նշված գրություններին Ա/Ձ Վարդուհի Բագրատյանը չի պատասխանել, իսկ հայտում նշված հեռախոսահամարով հնարավոր չի եղել կապ հաստատել վերջինիս հետ:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/237 ընթացակարգի շրջանակներում 09.11.2020թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/237 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/237 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և Ա/Ձ Վարդուհի Բագրատյանի միջև 28.07.2020թ. կնքվել է «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/12-1» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Ա/Ձ Վարդուհի Բագրատյանը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1

հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրին կից Հավելված 1-ի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 700 լիտր «Էթանոլ բժշկական 96%», ապրանքատեսակների մատակարարումը պետք է իրականացվի կողմերի միջև պայմանագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օրից /եթե մատակարարը չի համաձայնվում մատակարարել ավելի շուտ/, մատակարարումը՝ ըստ պահանջի:

3. Ա/Ձ Վարդուհի Բագրատյանին ուղղված 16.10.2020թ. թիվ 741 ծանուցմամբ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն հայտնել է, որ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և Ա/Ձ Վարդուհի Բագրատյանի միջև 28.07.2020թ. կնքված «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/12-1» ծածկագրով գնման պայմանագրի համաձայն վերջինս պարտավոր էր «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին մատակարարել էթանոլ բժշկական 96%՝ 700 լիտր: Պատվիրատուն նշել է, որ ապրանքի մի մասը ստանալուց հետո, մյուս մասը բազմիցս պահանջելուց հետո չի մատակարարվել:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի ա) ենթակետը և 6.2 կետը, 16.10.2020թ. միակողմանի լուծում է Պայմանագիրը:

4. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 18.10.2020թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 02.11.2020թ. թիվ 26/26-1/16460-2020 գրությունը, «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 19.10.2020թ. թիվ 747 և 28.10.2020թ. թիվ 772 գրությունների և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի

գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և Ա/Ձ Վարդուհի Բագրատյանի միջև 28.07.2020թ. կնքվել է «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/12-1» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Ա/Ձ Վարդուհի Բագրատյանը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և

հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրին կից Հավելված 1-ի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 700 լիտր «Էթանոլ բժշկական 96%», ապրանքատեսակների մատակարարումը պետք է իրականացվի կողմերի միջև պայմանագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օրից /եթե մատակարարը չի համաձայնվում մատակարարել ավելի շուտ/, մատակարարումը՝ ըստ պահանջի:

Ա/Ձ Վարդուհի Բագրատյանին ուղղված 16.10.2020թ. թիվ 741 ծանուցմամբ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն հայտնել է, որ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և Ա/Ձ Վարդուհի Բագրատյանի միջև 28.07.2020թ. կնքված «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/12-1» ծածկագրով գնման պայմանագրի համաձայն վերջինս պարտավոր էր «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին մատակարարել էթանոլ բժշկական 96%՝ 700 լիտր: ***<u>Պատվիրատուն նշել է, որ ապրանքի մի մասը ստանալուց հետո, մյուս մասը բազմիցս պահանջելուց հետո չի մատակարարվել:</u>***

<u>Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի ա) ենթակետը և 6.2 կետը, 16.10.2020թ. միակողմանի լուծում է Պայմանագիրը:</u>

Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 18.10.2020թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

<u>Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝</u>

<u>ա) Մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,</u>

<u>բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:</u>

Այսպիսով՝ Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի ա) ենթակետը, այն է՝ մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում, 16.10.2020թ. միակողմանի լուծել է Պայմանագիրը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 108-րդ կետի համաձայն՝ Պայմանագրի կատարման նկատմամբ նախնական հսկողությունն իրականացնում է պատասխանատու ստորաբաժանումը: ***<u>Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի և գնման պայմանագիր կնքած անձի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ,</u>*** որի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը:

Կարգի 109-րդ կետի համաձայն՝ արձանագրությունն ստորագրվում է, եթե առկա է պատասխանատու ստորաբաժանման գնման հայտը նախագծած ներկայացուցչի (ներկայացուցիչների) գրավոր դրական եզրակացությունը: Սույն կետում նշված անձը պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ տալիս է դրական եզրակացություն, եթե մատակարարված ապրանքը, կատարված աշխատանքը կամ մատուցված ծառայությունը համապատասխանում են պայմանագրի պայմաններին: Պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետների խախտման դեպքերում տրվում է դրական եզրակացություն, եթե պատվիրատուի կողմից չի ընդունվում պայմանագիրը լուծելու մասին որոշում: ***<u>Բացասական եզրակացություն տալու դեպքում պատասխանատու ստորաբաժանումը երկու աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին գրավոր հայտնում է պատվիրատուի ղեկավարին՝ ներկայացնելով առաջարկություններ պայմանագրի կողմի նկատմամբ ձեռնարկվելիք միջոցների վերաբերյալ</u>***: Նման դեպքում պատվիրատուի ղեկավարը ներկայացված առաջարկություններին համապատասխան ձեռնարկում է միջոցներ՝ հարցի կարգավորման համար: ՀՀ պաշտպանության նախարարության պատվերներով իրականացվող տեղական արտադրության ռազմական նշանակության ապրանքի և (կամ) գույքի համար, որոնց ընդունումը (նախատեսված է) իրականացվել է պատվիրատուի ներկայացուցչության միջոցով, արձանագրության ստորագրման համար հիմք է ընդունվում ներկայացուցչության կողմից այդ ապրանքի և (կամ) գույքի համար տրված դրական եզրակացությունը:

Կարգի 110-րդ կետի համաձայն՝ Էլեկտրոնային եղանակով իրականացվող գնումների դեպքում պայմանագրի կատարման արդյունքի ընդունման հետ կապված սույն բաժնով սահմանված գործողություններն իրականացվում են էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով, հաշվի առնելով հետևյալ առանձնահատկությունները՝

1) պայմանագրի կամ դրա մի մասի ընդունման նպատակով պայմանագիր կնքած անձը դրանով սահմանված ժամկետում էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով պատվիրատուի ղեկավարին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը: ***Պատվիրատուի ղեկավարը հանձնման-ընդունման արձանագրությունն ստանալուն հաջորդող աշխատանքային օրը, նույն համակարգի միջոցով տրամադրում է պատասխանատու ստորաբաժանմանը***.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված հանձնման-ընդունման արձանագրությունն ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանման՝ ***գնման հայտը նախագծած ներկայացուցիչն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով պատասխանատու ստորաբաժանման ղեկավարին է տրամադրում էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ եզրակացություն***.

3) ***եթե պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրվել է՝***

ա. դրական եզրակացություն, ապա եզրակացությունն ստանալու օրը պատասխանատու ստորաբաժանման ղեկավարն էլեկտրոնային ստորագրությամբ հաստատում և էլեկտրոնային համակարգի միջոցով պատվիրատուի ղեկավարին է ուղարկում հանձնման-ընդունման արձանագրությունը և եզրակացությունը, որոնք վերջինս 1 աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով տրամադրում է պայմանագիր կնքած անձին,

բ. բացասական եզրակացություն, ապա եզրակացությունն ստանալու օրը պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը եզրակացությունը և իր կողմից չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով տրամադրում է պատվիրատուի ղեկավարին, որոնք վերջինս մեկ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է պայմանագիր կնքած անձին:

Այսպիսով՝ վերը շարադրված իրավական կարգավորումների վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ ***Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի և***

գնման պայմանագիր կնքած անձի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, այնուհետև Պատվիրատուի ղեկավարը հանձնման-ընդունման արձանագրությունն ստանալուն հաջորդող աշխատանքային օրը, նույն համակարգի միջոցով տրամադրում է պատասխանատու ստորաբաժանմանը, ***որից հետո պատասխանատու ստորաբաժանման գնման հայտը նախագծած ներկայացուցիչը տրամադրում էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ եզրակացություն և եթե պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրվել է բացասական եզրակացություն, ապա եզրակացությունն ստանալու օրը պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը եզրակացությունը և իր կողմից չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով տրամադրում է պատվիրատուի ղեկավարին, որոնք վերջինս մեկ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է պայմանագիր կնքած անձին, մինչդեռ՝ Պատվիրատուի կողմից տրամադրված փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ վերը նշված փաստաթղթերը, այն է՝ հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը առկա չեն, ավելին՝ առկա է 14.08.2020թ. տրված պայմանագրի կատարման կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ դրական եզրակացություն, ինչն արդեն հերքում է Վաճառողի՝ Ա/Ձ Վարդուհի Բագրատյանի կողմից Պայմանագրի 2.1.7.1 կետի ա) ենթակետի խախտման փաստը, <u>այսինքն՝ Գնորդի՝ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից նշված հիմքով 28.07.2020թ. կնքված «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/12-1» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիրը լուծելն իրավաչափ չէ:***</u>**

Միևնույն ժամանակ, անդրառնալով Պատվիրատուի կողմից 16.10.2020թ. Ա/Ձ Վարդուհի Բագրատյանին ուղղված թիվ 741 ծանուցմանը, հարկ եմ համարում արձանագրել, որ <u>***Պատվիրատուն նշել է, որ ապրանքի մի մասը ստանալուց հետո, մյուս մասը բազմիցս պահանջելուց հետո չի մատակարարվել,***</u> այսինքն՝ Պատվիրատուն գրությամբ չի քննարկել արդեն իսկ մատակարարված ապրանքի անպատշաճ որակի լինելու հարցը, այլ հայտնել է, <u>***որ մյուս մասը պահանջելուց հետո չի մատակարարվել,***</u> ինչը վկայում է Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի դիսպոզիցիայի առկայության մասին, այն է՝ Վաճառողը խախտել է Պայմանագրին կից Հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ապրանքի մատակարարման

ժամկետները, ***այսինքն՝ Պատվիրատուի գործողությունները այս տեսանկյունից դիտարկելու դեպքում ևս, պարզ է դառնում, որ եթե նույնիսկ վերջինս Պայմանագիրը լուծել է ոչ թե անպատշաճ որակի ապրանք մատակարարելու հիմքով (Պայմանագրի 2.1.7.1 կետի ա) ենթակետ), այլ ապրանքի մատակարարման ժամկետները խախտելու և մի մասը առհասարակ չմատակարարելու հիմքով (Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետ), ապա այս դեպքում ևս դրսևորել է ոչ իրավաչափ վարքագիծ, այն է՝ Վաճառողին՝ Ա/Ձ Վարդուհի Բագրատյանին, ուղղված գրությամբ և www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 18.10.2020թ. հրապարակված Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցմամբ նշել է, որ 16.10.2020թ. միակողմանի լուծում է Պայմանագիրը՝ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի ա) ենթակետը:***

Այսպիսով՝ ուսումնասիրելով գործում առկա նյութերը, մասնավորապես՝ Պայմանագիրը լուծելու վերաբերյալ Ա/Ձ Վարդուհի Բագրատյանին ուղղված գրությունը, գտնում եմ, որ թեև Ա/Ձ Վարդուհի Բագրատյանի կողմից թույլ է տրվել Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի խախտում, բայց ինչպես արդեն որոշմամբ արձանագրվեց Պատվիրատուն Պայմանագիրը լուծել է սխալ կետով՝ Ա/Ձ Վարդուհի Բագրատյանին վերագրելով Պայմանագրի մեկ այլ կետով նախատեսված խախտում, ուստի գտնում եմ, որ նման պայմաններում հնարավոր չէ արձանագրել Ա/Ձ Վարդուհի Բագրատյանի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտման փաստը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 02.11.2020թ. թիվ 26/26-1/16460-2020 գրությամբ Ա/Ձ Վարդուհի Բագրատյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**